№ 239 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 1899 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 № 239

ՔԱՆԵՕԹԵՐԱՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція „Мшакъ".
Կամ Tiflis. Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բաժանորդութիւնների համար վճարում են
ուրբաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հինգշաբթի օր, ամսիս 23-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում, ս. պատարագից յետոյ, կատարվելու է հոգեհանգիստ հանգուցեալ

ՈՍԿԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ՈՍԿԱՆԵԱՆՑԻ

յիշատակին, նրա ժամվան քառասներորդ օրը. որի մասին հանդուցեալի որդիքը յայտնում են ազգականներին և ծանօթներին: Պատարագը կը սկսվի ժամի $10^1/_2$ առաւօտեան: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սոսկալի աղէտ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դեկտեմբերի 19-ի երկրաշարժը. Հայոց ներկայացումները Բագուում. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Ֆրանսվաղեան պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՍՈՍԿԱԼԻ ԱՂԷՏ

Մենք ստացանք Ախալքալաքից մի շատ տխուր հեռագիր: Սաստիկ երկրաշարժից, որ տեղի ունեցաւ կիրակի, դեկտեմբերի 19-ին, գիւղերը աւերակ են դարձել: Թիֆլիսի նահանգապետի և տեղական լրագիրների ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ երկրաշարժը սարսափելի աւերածներ է կատարել, քանդելով տներ և աւերակների տակ թաղելով մարդկանց և անասուններին: Տեղական գաւառապետը, առած իր հետ զինուորական խմբեր, պատում է գիւղերը՝ պարզելու սարսափելի աղէտի մանրամասնութիւնները, օգնելու վիրաւորներին և նպաստներ տալու անտուն և անպատսպարան ժողովրդին:

Երկրաշարժը, և այն էլ մեծ երկրաշարժը, որ տեղի է ունեցել Ախալքալաքի գաւառում, աղէտ է ժողովրդի համար ամեն ժամանակ. բայց նա բազմապատիկ աւելի սարսափելի և սոսկալի է ձմեռը, երբ մարդիկ անկարող են նոյն-իսկ ժամանակաւորապէս բացօթեայ ապրել և սպասել մինչև նրանց քանդված տները և բնակարանները վերանորոգվեն կամ կարկատվեն: Իսկ բախտի բերմունքով ներկայ ձմեռը մի այնպիսի ցուրտ և խիստ ձմեռ է, որի նմանը շատ ժամանակ է չէ եղել մեզանում:

Անհրաժեշտ է անյապաղ օգնութիւն թշուառացած և սարսափահար եղած ժողովրդին: Դուք, ապահովե՛ր, որ ունէք տուն ու հանգիստ կեցութիւն, որ ձմեռվայ այս դառնաշունչ օրերը կարող էք պատսպարվել և ազատ պահել ձեզ հիւանդութիւններից, մտածեցէք, որ տասնեակ գիւղերի բազմաթիւ ազգաբնակութիւն զրկվել է պատսպարանից, կորցրել է իր տունը և հարստութիւնը, դատապարտված է սաստիկ ցրտերի և կարօտութեան: Օգնութիւն հասէք որքան կարելի է շուտով, որպէսզի փոքր ի շատէ թեթևանայ սոսկալի աղէտի պատճառած մեծ թշուառութիւնը: Մխիթարեցէ՛ք տառապեալ ժողովրդին ձեր եղբայրական պատրաստականութեամբ՝ տալու նրան ամեն տեսակ օգնութիւն, մաս հանելու ձեր ունեցածից և պաշտպանութեան տակ առնելու զրկվածներին:

Մենք սպասում ենք նորանոր մանրամասնութիւնների ներկայ սարսափելի աղէտի մասին, որ երևի աւելի է՝ քան մեզ յայտնի է առաջին հեռագիրներից: Երկրաշարժը տեղի է ունեցել շատ ընդարձակ տարածութեան վրա և զգալի է եղել Քութայիսի, Թիֆլիսի, Ղարսի, Երևանի և Գանձակի նահանգներում: Բայց ըստ երևոյթին նա ամենից խիստ կերպով արտայայտվել է Ախալքալաքի գաւառում: Երկու տարի սրանից առաջ, ամառը, երբ երկրաշարժ տեղի ունեցաւ՝ դարձեալ ամենամեծ հարուածներ ստացաւ Ախալքալաքի գաւառը, որտեղ տեղի ունեցան մի քանի աւերումներ: Իսկ այժմ երկրաշարժը դարձաւ մի աղետաբեր հարուած գաւառի բազմաթիւ գիւղերի համար:

«Մշակի» խմբագրութիւնը ամենայն պատրաստականութեամբ յանձն կառնէ հաստատել տեղական վարչութեան, կամ յատուկ նշանակված հիմնարկութիւններին այն նպաստները, որ կուղարկեն մեզ զանազան տեղերից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Եւրոպայի հիւսիսը ընտանեկան և հասարակական կեանքի հրաշալի նկարագիրներ է տալիս մեզ: Կարդում ենք մենք ճանապարհորդների, թղթակիցների պատմածքները, և թւում է մեզ, թէ կարդում ենք ինչ-որ հրաշալի, դիւթիչ հէքիաթ. դիւթիչ ոչ թէ այն վառ գոյների, ֆանտաստիական չքեղութիւնների պատճառով, որոնք մի Շեհերազադէի հէքիաթներն են անմահացնում, այլ այն պարզութեան, մեղմ, կենդանի ապաւորութեան պատճառով, որ թողնում է մեզ վրա մարդկային մի սիրուն իրականութիւն: Մենք այդ իրականութեան մէջ տեսնում ենք դարերի սկզբից երազած ընտանեկան դրախտը. տեսնում ենք, թէ ինչպէս այդ դրախտը պատրաստում է թարմ, ջղուա, կենսունակ ժողովուրդներ, որոնց այնքան մատչելի է կեանքի երջանկութիւնը, որոնք մռայլ ու յուսահատ չեն կարող լինել իրանց ապագայի վերաբերմամբ: Ո՛րպիսի հակադրութիւն Եւրոպայի հիւսիսի և հարաւի մէջ: Հարաւում՝ մեր ժամանակի ամենահռչակաւոր վիպագրողներից մէկը, Էմիլ Զոլան, գրում է «Բեղմնաւորութիւն» անունով մի ամբողջ սարսափելի վէպ, որպէս զի ցոյց տայ, թէ անկման ինչ աստիճանի է հասել ընտանիքը Ֆրանսիայում, թէ այնտեղ ամբողջ դասակարգեր որպիսի քստմնելի ոճիրներ են կատարում մարդկանութեան, ընտանիքի հասկացողութեան դէմ: Դա մի ահաւելի մեղադրական ճառ է, որ տաղանդաւոր վիպագրողը կարդում է իր երկրի դէմ, և նրա մանրամասնութիւնները սարսուռ են ազդում մեզ, ընթերցողներիս: Այդ դրութեան հակառակ բնաւը հիւսիսում որոնեցէք: Ահա, օրինակ, առաջաց հռչակաւոր վիպագրող Տօլստոյի որդին «С. Пет. Вѣд.» լրագրի մէջ թերթ, հարևանցօրէն նկարագրում է չվէդական ընտանիքը, և դուք տեսնում էք մի սրբազան հիմնարկութիւն, մի ամբողջ մեծ դպրոց, որ կրթում, պատրաստում է երիտասարդ սերունդը առողջ և գեղեցիկ կեանքի համար:

Ընտանիքը Շվէդիայում վաղուց վայելում է մեծ յարգանք, չը նայած որ ապահովագրի գործը հեշտացրած է, չը նայած մի քանի անմխիթար երևոյթներին և հայեացքներին: Համերաշխ, անարատ ընտանիք, երեխաներ—ահա մարդու միակ շօշափելի երջանկութիւնը այստեղ կեանքի մէջ: Մայր և տատիկին, հաւատարիմ և անձնուէր ամուսին, երեխաների դաստիարակիչ մինչև դպրոցական հասակը—ահա շվէդացի կնոջ կոչումը: Եթէ նա այդ բոլորն անում է խելացի կերպով և ուրախութեամբ՝ նա կատարում է այն բարձր բանը, որ տրված է նրան, և ընդհանուր յարգանք է վայելում: Չը նայած, որ այստեղ էլ կայ ֆէմինիզմ, որ շվէդացի կինը ազատութիւն է ձեռք բերում և աստիճանաբար տղամարդի հաւասար իրաւունքներ է նուաճում՝ այդ կինը շարունակում է մնալ իր գլխաւոր տեղում և, ի հարկէ, կը մնայ մինչև աշխարհի վերջը...

Ֆէմինիզմը, կանանց ազատութիւնը չեն էլ ոչնչացնում ընտանիքի մօր պարտաւորութիւնները, և այդ կողմից, ուրեմն, շվէդուհին տալիս է փայլուն ապացոյցներ այն մարդկանց, որոնք կարծում են, թէ ազատ կինը մայր լինել չէ կարող: Բայց աւելի անգին, աւելի հրաշալի է շվէդուհու մի ուրիշ յատկութիւնը:

Գիտակցաբար վերաբերվելով իր կոչման, հասկանալով որ ինքը երեխաների դաստիարակիչն է մինչև ուսումնարան ուղարկելը՝ շվէդացի կինը թոյլ չէ տալիս, որ իր տունը, իր ընտանիքը մտցնվի մի ուրիշ կին, օրինակ, դաստիարակչուհի, ինչպէս այդ տեղի ունի մեզ մօտ: Համարեա երբէք դուք շվէդական ընտանիքում չէք տեսնի օտար կին, բացի մօրից, որ դաստիարակում է երեխաներին, ինչպէս չէք տեսնի նաև ծծայր: Բացառութիւնները հազուագիւտ են: Մայրը առաջին օրերից կամենում է ինքը կերակրել, պահել, դաստիարակել իր երեխաներին և մինչև վերջը հաւատարիմ մնալ նրան:

Եւ այս դաստիարակութիւնը նոյնպէս առողջարար ու գեղեցիկ է՝ ինչպէս մայրական պարտաւորութեան իդէալական գործադրութիւնը: Երեխան իր կեանքի առաջին օրերից բնական և կատարեալ զարգացում է ստանում: Առատ օդ, քուն և կերակուր—ահա այն ամենը, ինչ տրվում է նրան մանկութեան առաջին շրջանում: Իսկ յետոյ հոգս են տանում, որ նա երես չառնէ և փափկակեցութեան չը վարժվի: Երեխան սովորում է հնազանդ լինել և նրա կամքը շատ էլ նշանակութիւն չունի ծնողների համար: Եթէ նա մայր է ընկնում՝ մեղաւորը, ինչպէս մենք ենք ասում, աթոռը չէ, որին և պէտք է ծեծել, այլ նա ինքը, երեխան, որ չէ տեսել աթոռը, մայր է ընկել: Թող անձրև ու ցուրտ լինի, բայց երեխան պիտի գնայ զբօսնելու, որովհետև պէտք է որ նա ամեն օր մաքուր օդի մէջ լինի: Հետզհետէ նրան աւելի և աւելի ազատութիւն են տալիս, սովորեցնում են որ նա անկախ լինի,—անկախ զբաղմունք ունենայ, անկախ վճիռներ կայացնէ և կարծիքներ ունենայ:

Եւ ահա չնորհիւ այսպիսի ուշադիր կրթութեան, մօր և երեխաների մէջ եղած այս հոգեկան կապի՝ երեխաներից դուրս են գալիս ազնիւ, առողջ մարդիկ, ուժեղ և բաց բնաւորութիւններ են մշակվում: Ֆիզիքական կրթութեան վրա խիստ ուշադրութիւն է դարձնվում: Օդի մէջ ցատկոց, զբաղմունքներ, ոտաբոբիկ վազվզել, լողանալ և այլն,—այս բոլորի մէջ մայրը աշխատում է զեկավար հանդիսանալ, ինքն էլ մասնակցում է, մի բոպէ անգամ աչքից չը թողնելով երեխային ոչ արտաքին և ոչ էլ ներքին կողմից:

Այսպէս ուրեմն, շվէդական ազգի համար՝ տոկուն, առողջ և հիւթալից սերունդներ պատրաստելը գաղտնիք չունի: Դա գաղտնիք է միայն յետադէմ, ծոյլ ազգերի համար, որոնք միայն հիանալ գիտեն, տեսնելով ուրիշների բախտաւորութիւնը: Այդպիսիներին վիճակված է միայն նախանձողների տխուր դերը, նախանձողներ, որոնց խեղճութեան ամենայուսահատական հանգամանքը հէնց այն է, որ ամեն ինչ հրաշքներից, գերբնական մի ոյժից են սպասում, մոռանալով որ շվէդացին նախանձելի է իր գործով, իր տոկուն և յամառ աշխատութեամբ: Նայեցէք մեր տիկնոջը: Դեռ Պարիզում փետրային այս կամ այն պաճուճանքը չէ կարողացել ընդհանրութեան ուշադրութիւնը գրաւել, և ահա մեր ասիական-հարեմական հասկացողութիւնների մէջ իսկոյն այդ նորաձև փետուրներն են ծածանվում կնոջ գլխի վրա: Ասում են, որ Ամերիկայի կամ Աֆրիկայի վայրենիները եւրոպացիներից նախ և առաջ արաղ խմելը և ուրիշ այդ տեսակ մոլութիւններ են սովորում: Մեզ համար էլ Եւրոպան իր քաղաքակրթութեամբ միայն զարդեր, միայն հագուստ, միայն զեղխութիւն ու նուրբ անառակութիւն է: Մեր տիկինը այնքան առաջ է գնացել, որ նոյն-իսկ սկսել է ճանապարհորդել Եւրոպայում: Բայց ինչ է բերում նա այնտեղից: Քրքրեցէք նրա ճանապարհորդական ծանրոցքը, երբ նա աշխարհ տեսնելուց, հիանալուց յետոյ դէպի մեր իրականութիւնն է վերադառնում, և դուք այնտեղ միայն փետուրներ, ժետաքսեայ կտորներ, չքեղ սրուակներ, ոսկու կտորներ և բազմաթիւ ուրիշ այս տեսակ բաներ կը գտնէք, որոնք լոկ մարմինը զարդարելու նշանակութիւնն ունեն: Չենք կարող ասել, թէ այդ ճանապարհորդները միայն մանր մունր, թանգ ու էժան իրեր են բերում: Ո՛չ, նրանք հատուցվում են Եւրոպայում, որ մայր լինելը մօդա չէ, խանգարում է պաճուճանքներով պատած մարմնի ազատութիւնը, որ երեխաներին կերակրելը, մեծացնելը և դաստիարակելը աստուածները միայն աղքատներին են հրամայել, իսկ ով աղքատ չէ՝ նրա համար պատրաստ են ծծայրերը, տընային դաստիարակչուհիները, նաժիշտները և այլն: Իսկ շվէդուհու թանգագին յատկութիւններից մէկը-երկուսը մեզ մօտ անցնել չեն կարող. թանձր ու կարծր պատուարներ դնենք այդ յատկութիւնների առաջ, և ապա, երբ կը կարդանք շվէդական ընտանիքի հրաշալի նկարագրութիւնը, բերանաբաց նախանձենք: Սա էլ հօ մի բանի նման է...

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Հաղորդում ենք դարձեալ մի քանի մանրամասնութիւններ դեկտեմբերի 19-ի երկրաշարժի մասին: Թիֆլիսում Ս. Նունէի ուսումնարանի եկեղեցու ահագին թուջի խաչը երկրաշարժի ցնցումից վայր ընկաւ և փշրվեց. շատ եկեղեցիների զանգակներ զողանջեցին: Ինչպէս երէկ հաղորդեցինք՝ երկրաշարժի առաջին հարուածի ժամանակ Թիֆլիսի առաջին գիմնազիայում ակտ կար. երբ տարածվեց երկրաշարժի դղրդիւնը՝ աշակերտների նուագածախումբը գլուխ կորցրեց և դէն գցելով երաժշտական գործիքները, նուագողները փախան դէպի դուռները: Ս. Նունէի դպրոցում այդ ժամանակ դեռ չէր վերջացել այցելողների ընդունելութիւնը. սենեակում եղած հասարակութիւնը շտապեց դուրս վազել բակը, և այդ ժամանակ նրա վրա ընկնում էին ձիւնի հիւսերը, որոնք թափվում էին կտուրից՝ շինութեան ցնցումների պատճառով: Այս բոլորը տեղի ունեցաւ երկրաշարժի առաջին հարուածի ժամանակ, ցերեկը, ժամի մօտ 2-ին: Նոյն օրը ժամի $4^1/_2$-ին ու մօտ 9-ին էլի երկու հարուածներ եղան, բայց դրանք թոյլ էին և երկիւղ չազդեցին:

Ստացված տեղեկութիւններին նայելով՝ երկրաշարժի ցնցումներ եղել են և Անդրկովկասեան երկաթուղու գծի երկարութեամբ դէպի արևմուտք: Երկրաշարժը զգալի է եղել և Աբասթումանում, այլ և Վլադիկավկազի ճանապարհի վրա, Կովկասեան լեռներում:

Բայց ամենից սարսափելի աւերմունքներ գործել է երկրաշարժը Ախալքալաքի գաւառում: Ահա ինչ են հեռագրում Ախալքալաքից «Тифл. Листокъ» լրագրին.

«Դեկտեմբերի 19-ին: Այսօր, ցերեկվայ ժամի երկուսից հինգ բոպէ անց, քաղաքում եղաւ սաստիկ երկրաշարժ: Ստորերկրեայ հարուածները առանձին ուժեղութեամբ էին կրկնվում. տների ճարճատիւնը յուզմունք տարածեց քաղաքում. սարսափելի ահը պաշարեց ամենքին. մեծ բազմութեամբ տներ սաստիկ վնասված են:—Գաւառապետը ստացել է պաշտօնական տեղեկութիւն, որ երկրաշարժից տասն գիւղեր աւերակների կոյտեր են դարձել: Այս տեղեկութիւնները բերողները հաւատացնում են, որ հազարաւոր գիւղացիներ մնացել են առանց յարկի և կերակրի: Զոհեր և աւերակների տակից դեռ չը հանված դիակներ շատ կան: Վնասված ազգաբնակութեան անօգնական դրութիւնը անկարելի է նկարագրել. ցուրտն ու դաժան ձմեռը աւելի ևս դժուարացնում են ազգաբնակութեան դրութիւնը: Օգնեցէք, ինչով կարող էք...

Դեկտեմբերի 20-ին: Այսօր մինչև կէսօր սաստիկ երկրաշարժի հետևանքները պարզվեցան էլի հետևեալ տեղեկութիւններով: Երկրաշարժի ուղղութիւնն էր արևմուտքից դէպի արևելք: Գաւառում, Բարալէթի գաւառամասում, քարուքանդ են եղել մեծ քանակութեամբ տներ. սաստիկ վնասվել են տասն գիւղեր. Բէժանս, Այաթուբան, Կո-

չիս, Իսպանիա, Մերելիա, Գոսզալար, Սամարկիշալի, Մեծ Աղավիեր, Արագովա, Մաջադիա։ Կոտորվել են շատ ժարդիկ և անասուններ։ Ազգաբնակութիւնը և անասունները մնացել են բաց երկնքի տակ։ Բնակարանների, հացի, հագուստի և վառելիքի մեծ կարօտութիւն կայ։ Գաւառապետը մի քառալիոն զինուորների հետ գնաց քանդված գիւղերը՝ օգնութիւն հասցնելու համար։ Քաղաքը և Բոզդանովի գաւառամասը աւելի քիչ են վնասվել։ Անհրաժեշտ է անյապաղ օգնութիւն, բացի պետական օգնութիւնից նաև ժանաւոր օգնութիւն։ Մանրամասնութիւնները կը հաղորդեմ, երբ կը պարզվեն»։

ՀԱՑՈՑ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

Անտրպրիզան մերթ ընդ մերթ ստիպված է տալ մելոդրամաներ. ասում ենք՝ ստիպված է, որովհետև մեր հասարակութիւնն էլ թուլութիւն ունի դէպի ցնցող տեսարանները։ Երբ անալիզը մի շրջանում այնքան զօրեղ չէ, որ երևոյթը գնահատութեան առնվի բնականութեան տեսակէտից (թողնում ենք միւս պահանջները)՝ բացառիկ և արկածալից դրութիւնների նկարագրութիւնը դիւթական ազդեցութիւն է թողնում, թէկուզ նրանք լինեն բռնութիւններ հոգեբանութեան, իրականութեան և պատմութեան դէմ։ Բացի այդ՝ մելոդրամն զբաւում է սովորական հասարակութիւնը իր նիւթի տարբերակութեամբ, հետևաբար ժամանակաւորապես։ Զը նայելով շատ անգամ փքուն խօսքերին և մեծանչիւն անուններին՝ մելոդրամն վերջ ի վերջոյ ընդհանրապէս պարզ և տարբերական դրամա է ներկայացնում, այն տարբերութեամբ միայն, որ մարդկային կրքերը դուրս են բերված լինում բնական սահմանից դուրս և ծայրայեղ լարման մէջ, որպիսի հանգամանքի մէջ է կայանում ամբոխի հետաքրքրութեան իսկական պատճառը։ Ինչու է սովորական հասարակութիւնը գրաւվում այդ տեսակ տեսարաններով.—դա՝ մարդկային հոգու գաղտնիքներից մէկն է, շատ գաղտնիքների հետ։

Դեկտեմբերի 8-ին ներկայացրած «Գնչուհի Զադա» պիեսան ամենատիպական մելոդրամներից մէկն է։ Կարելի է ասել, որ մելոդրամատիկական արտենալում պահեստի ոչինչ չէ թողնված, որ գործ դրված չը լինի սրանում։ Այստեղ կայ նախընթաց սպանութիւն, գնչուհի, թոյն, սիրով բռնված դահճի, քրէական դատաստան, տրագիական թիւրիմացութիւն, վերջապէս հերոսուհու սպանութիւն և ապա լաց ու կոծ։ Իսկ ներքուստ բոլոր դրամատիզմը կայանում է երկու, կուրութեան աստիճանի հասցրած կրքերի ընդհարման մէջ, ծայրայեղ կոյր սիրոյ և նոյն տեսակի ատելութեան, որոնց մեքենաբար լարակցած են այլ հոգեկան դրութիւններ, միայն արտաքուստ սովորական դրամայի կազմը պաշտպանած լինելու համար, իբր տալով դրամատիկական երևոյթի հոգեբանական միջավայրը։ Ապա ըստ մելոդրամայի սիստեմի՝ այդ կրքերը ժարմնացած են առանձին անձնաւորութիւնների մէջ, որոնցից իւրաքանչիւրը հոգու մի յատկութիւն է ներկայացնում միայն, որը միևնոյն ժամանակ հասցրած է ծայրայեղութեան։

Գլխաւոր դերը, Գնչուհի Զադային՝ ներկայացնում էր տիկին Սիրանոյշ. միայն դերասանուհու ընդունակութիւններին պիտի վերագրել, որ կարողանում էր հետաքրքրութիւն պաշտպանել դէպի անկատար և անբնական տիպը։ Լուսի իրաւամբ է նկատում, որ նկարագրելի նիւթի գեղարուեստական թերութիւնը ծայրայեղ բացառական հանգամանք է նոյն-իսկ փայլուն խաղի տպաւորութեան համար։ Տիկին Մայուրեանց Զիայի դերում նկատելի էր այն կողմից, որ թէև ուղիղ էր տանում խաղը՝ բայց գործ չէր գտնում իր բոլոր ոյժերը։ Դրութեան նորութիւնը ըստ երևոյթին շարունակում է պաշտպանել իր զօրութիւնը նրա վերաբերմամբ։ Դերասանուհուն պիտի նկատած, որ եթէ դուրս հանենք այն աշխատութիւնը, որը արտիստը գործ է դնում պատրաստութեան վրա՝ նա գուցէ ամբողջ սեզոնում միայն մի քանի ժամ է իսկապէս գործում։ Հետևաբար արտիստը պիտի լաւ յիշէ, որ այդ ժամերի համար է նրա բոլոր նախընթաց պատրաստութիւնը և ընթացիկ աշխատանքը, որ այդ ժամերի մէջ մարդ պիտի դուրս գայ իր ընդունակութիւնների բոլոր կարողութեամբ։ Պ. Աբէլեան կատարում էր երիտասարդ փաստաբան Սենէլի դերը. բայց տիպը այնքան վայր ի վերոյ է մշակված, որ շնորհալի դերասանին չհաջողվեց իր խաղին յատուկ սովորական որոշ ուժեղ տպաւորութիւնը թողնել։ Պ. Վրոյր յայտնի գնչու էր. արևելեան տիպերը նրան միշտ աջողվում են առանձնապէս։

Հերթական բէժիսսորութիւնը մի տեսակ գեղեցիկ մրցութիւն է հանդիսանում մեր հմուտ դերասանների մէջ։ Այժմ այդ պաշտօնը կատարում է պ. Արաքսեանը, և նկատելի է, որ ջանք է գործ դնում ներկայացումների պատրաստութեան վրա, դժբախտաբար մի անգամ անուշադիր հանդիսանալով դէպի ինքը։ Նա աչքի ընկնող ճաշակ է ցոյց տալիս նա ժանաւանդ բեմի կահաւորութեան և տեսարանների պատրաստութեան մէջ։ Այս կողմից նա գեղեցիկ իլլիւզիա ստեղծեց «Զադայում», շատրուանի տեսարանում։

Դեկտեմբերի 12-ին ներկայացումը կայացաւ կրկին կլուբի դահլիճում։ Խաղում էին «Զարլեյի մօրաքոյր» յայտնի ֆարսը, որը ի միջի այլոց յայտնի է նրանով, որ գերմանական այժմեան կայսեր ամենասիրած պիեսան է համարվում։ Այս զուտ զաւեշտական, առանց մի որևիցէ դաղափարի, բայց բաւականին հումօրով գրուածքը այս երեք տարվայ ընթացքում շատ անգամ է տրված մեր բեմի վրա։ Սրա այս ներկայացման մասին միայն նրա համար յիշեցինք, որ առանց նկատողութեան թողած չը լինենք այն շառժերը, որ պ. Արաքսեան թոյլ էր տալիս այս անգամ իր խաղի մէջ։ Ցաւալի է տեսնել, որ իրաք ընդունակ և հասկացող դերասանը չէ կարողանում միանգամայն ազատվել դէպի շառժը ունեցած թուլութիւնից, որը մերթ ընդ մերթ անսպասելի կերպով արտայայտվում է։

Դեկտեմբերի 15-ին խումբը խաղաց «Քոյր Թերեզա» յայտնի մելոդրամն, որը ամեն սեզոնի տրվում է,—բայց այս անգամ այնպիսի սառնամանիքի մէջ, որ, ինչպէս ռուսները ասում են՝ не до игры было. Բագուն երկրի այն մասերից է, որոնք ունեն բնութեան և նրա եղանակների միայն բացասական կողմերը։ Վերջի օրերի ցրտերը տեսնողը չը պիտի կարողանայ հաւատալ, որ մենք գտնվում ենք ովկիանոսի մակերևոյթից ցած, որ այստեղ լինում են ամառներ, որոնք Արաբիան են յիշեցնում։ Ճիշտ է, ջերմաչափը չէ իջնում ուրիշ տեղերի չափ, բայց դառնաշունչ նօրդը աւելի ցրտութիւն է տարածում, քան թէ իսկական սառնամանիքը։ Դերասանների խաղը այդ օրվայ եղանակին՝ աւելի շուտով նահատակութիւն էր յիշեցնում։ Միայն տիկին Սիրանոյշի խաղն էր, որ այդ տեսակ հանդամանքների մէջ հետաքրքրութիւն էր պաշտպանում, թէև անկասկած նրա տաղանդն ևս չէր գործում իր բոլոր զօրութեամբ։

Ե. Սաղաթէլեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Դեկտեմբերի 18-ին

Ուրբաթ, դեկտեմբերի 17-ին, երեկոյեան, քաղաքային խորհրդարանի դահլիճում տեղի ունեցան քաղաքիս աւագի և նրա օգնականի ընտրութիւնները, 13 իրաւասուների միջոցով։ Երկու օր առաջ, ամսիս 15-ին, արդէն տեղի էր ունեցել նոյն իրաւասուների ժողովը, Գ. Զաթալպաշեանի նախագահութեամբ, որտեղ քննվել էր վարչութեան ծառայողների ռօճիկների քանակութիւնը։ Այդ ժողովում ի միջի այլոց որոշվեց քաղաքային աւագի տարեկան ռօճիկը նշանակել 1400 ռուբլի (նախընթաց տարիները 1200 ռուբլի էր), իսկ նրա օգնականին՝ 800 ռուբլի. որոշվեց, որ աւագի օգնականը լինի միևնոյն ժամանակ քաղաքիս վարչութեան գանձապահը։

Այս անգամվայ ժողովը բացեց աւագի պաշտօնակատար Գ. Մովսիսեանը։ Քուէարկութեան հետևանքը հետևեալն է. միաձայն ընտրվեց աւագութեան պաշտօնի համար այժմեան պաշտօնակատար Գրիգոր Մովսիսեանը, օգնականի պաշտօնի համար ստացաւ 9 ձայն վարչութեան այժմեան գանձապահ Յարութիւն Ղազարոսեան, 1 ձայն Ն. Տէր-Գրիգորեան (նախկին աւագ), 1 ձայն Ե. Մելքոնեան, և 1 ձայն Վ. Յակոբջանեան։ Քուէարկվելուց հրաժարվեցին վերջին երեքը, որից յետոյ Յ. Ղազարոսեան միաձայն ընտրվեց (12 ձայնով) աւագին փոխարինող օգնական և միևնոյն ժամանակ գանձապահի պաշտօնավարիչ։ Մենք նորընտիրների արժանաւորութեան կամ անարժանութեան վերաբերութեամբ խօսք չենք կարող ասել. դա ցոյց կը տայ իրանց ապագայ գործունէութիւնը, ժանաւանդ որ սրանք եղել են նախկին վարչութեան պաշտօնակատարներ, (մինը աւագի օգնական, վերջը պաշտօնակատար, միւսը գանձապահի պաշտօնում)։ Աւելորդ չեմ համարում աւելացնել, որ քաղաքի բարեկարգութիւնը և առաջադիմութիւնը գլխաւորապէս կախված է քաղաքային վարչութեան աջող կազմակերպութիւնից։ Նախկին վարչութեան գործունէութիւնը անցեալ 4—5 տարիների ընթացքում համարեա աննշան անցաւ, և քաղաքս այդ միջոցում ոչ մի աչքի ընկնող գործ, բարեփոխութիւն չէ եղել, բացի պարտքերի շատանալուց։ Ցաւով պէտք է ասեմ, որ ներկայ վարչութեան ամբողջ կազմութիւնը համարեա միևնոյն անձնաւորութիւններից բաղկացած լինելով՝ մեծ գրաւականներ չէ խոստանում ապագայի համար։ Ի՞նչ կարող է անել աւագը, երբ շրջապատված է այնպիսի անձերով, որոնք գործին անտարբերութեամբ են վերաբերվում։

Քաղաքացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, դեկտեմբերի 20-ին, աչքի առաջ ունենալով այն հանդամանքը, որ ներկայ ցուրտ և ձիւնապատ ձմեռը շատ ծանր դրութիւն է ստեղծել քաղաքի աղքատութեան համար՝ որոշեց օգնութեան գալ, յատկացնելով քաղաքի կողմից այդ նպատակով մէկ հազար ռուբլի և բանալ ժողովարարութիւն։ Այդ յանձնարարութիւնները, այլ և Ա. Մանթաշեանի նուիրած նաթը վաճառելու և բաժանելու համար՝ դուման ընտրեց մի յատուկ յանձնաժողով։

—

Երկրագործական մինիստրութիւնը քննում է այժմ ամբողջ արևելեան Անդրկովկասի ջրերում ձկնորսութեան նոր կանոններին վերաբերեալ նախագիծը, որ ի միջի այլոց նպատակ ունի մաքառել մեր երկրի ջրերում ձկան քանակութեան անընդհատ նուազելու դէմ։

—

Ա. Կովալեսվ անունով մի պարոն, «Казбекъ» լրագրի ասելով, խնդրամատոյց էր եղել իրաւունք ստանալու հրատարակել «Դաղստանի թերթ» (Дагестанскій Листокъ) անունով լրագիր, սակայն խնդիրքը չէ յարգվել։

—

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում լսեց այն նկատողութիւնները, որ արել է նահանգական ատեանը քաղաքի նախահաշիվի վերաբերութեամբ։ Դուման ընդունեց մի քանի արդարացի նկատողութիւնները, իսկ միւսները հերքեց, որոնց մէջ էին և այն նկատողութիւնները, որ արել էր նահանգական ատեանը ձիաքարշի յետ գնելու առիթով։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ դեկտեմբերի 19-ից, մեզ գրում են. «Մեր քաղաքում չը կան հիմնարկութիւններ, որոնք օգնէին քաղաքիս խեղճ և աղքատ դասակարգին, տալով ուտեստ, հագուստ և վառելիք։ Բանւոր դասի համար գործ չը կայ, իսկ դուրսը սոսկալի ցուրտ ձմեռ է։ Քաղաքիս բնակիչների կէսը տառապեալ վիճակի մէջ է։ Չը կայ փայտ, որ վառարանը վառեն, չը կայ ալիւր, որ հաց թխեն, չը կայ շալէ հագուստ, որ ցրտից պաշտպանվեն, չը կան կօշիկներ, և խեղճ մարդկանց ընտանիքը ստիպված է այս դառնաշունչ ձմեռվայ օրերում մնալ առանց տաք հագուստի, առանց ուտեստի, առանց վառելիքի։ Մխիթարական է, որ աչքի առաջ ունենալով այս հանդամանքը՝ մեր նահանգապետը հրաժայել է քաղաքային վարչութեան՝ հիմնել «քաղաքային աղքատաց հոգաբարձութիւն»։ Ցանկալի է, որ ինչքան կարելի է շուտ գլուխ գար այս մարդասիրական գործը, այլապէս շատ վատթար կը լինի մեր քաղաքի մեծամասնութեան վիճակը»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Հինգշաբթի, դեկտեմբերի 16-ին, քաղաքային կլուբի դահլիճում կայացաւ մի պարահանդէս՝ քաղաքիս հայ երկսեռ ուսումնարանների չքաւոր աշակերտների և աշակերտուհիների օգտին։ Ինչպէս լսեցինք՝ եկամուտը շատ սակաւ է եղել»։

—

Հին-Նախիջևանի ԿԶՆՈՒԹ գիւղից մեզ գրում են. «Մեզանում կատարեալ ձմեռ է. շատ աղքատ գիւղացիներ էլ իր ժամանակին ջուր չը ստանալու պատճառով՝ չը կարողացան վերջացնել ցանքերը։ Այժմ այդ դարդը մոռացած՝ մեր գիւղացիները հարսանիքներով են զբաղված։ Մեզանում 10—12 տարեկան աղջիկներին նշանելը սովորական բան է։ Հէնց այս երեկոյ նշանեցին մի աղջիկ, որ հազիւ 12 տարեկան լինի»։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 14-ին հողին յանձնեցինք 70-ամեայ ծերունի Վարդան աւագ քահանայ Գասպարեանցի մարմինը։ Յուղարկաւորութեան ժամանակ թէև եղանակը ցուրտ էր, բայց հանգուցեալին պատուելու համար հաւաքվել էր ժողովրդի խուռն բազմութիւն։ Նա ընիկ արմաւիրցի էր և իր սկզբնական կրթութիւնը ստացել է Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում և ապա, աւարտելով Ներսիսեան դպրանոցը՝ 25-ամեայ հասակում քահանայ է ձեռնադրվել Ներսէս Աշտարակցու յորդորով, որը նամակով համոզում է իր դպրանոցի սանին՝ լինել հովիւ Արմաւիրի չերքեսախօս ժողովրդի, որոնք տարիների ընթացքում ընկճվելով ժամանեակական տարրի ազդեցութեան ներքոյ, հազիւ կարողացել են պահպանել քրիստոնէութիւնը։ Իր գործունէութեան սկզբում շատ նեղութիւնների է ենթարկվել և դառնութիւններ կրել, որովհետև այն ժամանակ արմաւիրցիները լեռնաբնակ ժողովուրդ էին, կորցրել էին մայրենի լեզուն, իւրացրել էին չերքեզերէնը և դաստիարակվել ու մեծացել նրանց հոգով։ Հանգուցեալը 45 տարի անխոնջ հովիւ է եղել իր ժողովրդի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Յայտնի է արդէն, թէ որչափ անհոգ և մինչև անգամ որքան տմարդի կերպով են վարվում անգլիացիները այն բօէրների հետ, որոնք գերի են ընկնում նրանց ձեռքը։ Գերմանական կամաւոր զօրաբաժնի հրամանատար գնդապետ Շիլի նամակները, գերի բօէրներից ստացված տեղեկութիւններն և ժանաւանդ գերիներին թնդանօթի բերանը կապելու զզուելի փաստը, որ հաստատված էր նոյն-իսկ անգլիական լրագիրների վկայութեամբ՝ բաւականաչափ լոյս են սփռում այդ տգեղ և անգլիական անուան համար վերին աստիճանի անպատուաբեր երևոյթի վրա։ Սակայն այդպէս չեն վարվում բօէրներն անգլիացի գերիի հետ։ Փաստերը ցոյց են տալիս, որ այդ քաջ, ազատասէր ժողովուրդը միևնոյն ժամանակ և մեծահոգի է և շարունակ դասեր է տալիս մեծամիտ անգլիացիներին ոչ միայն այն բանի վերաբերմամբ, թէ որպէս պէտք է կռուել, այլ նաև՝ թէ որպէս պէտք է վարվել հակառակորդի մեծահոգութեանը դիմող թշնամու հետ։

«Times»-ի յատուկ թղթակիցը հեռագրում է Մաղդէբ-Բիվերից, թէ Եակօբստադից անգլիական բանակն է վերադարձել զինուորական բժիշկ մայոր Բէրչէլը, որ Մագերսֆոնդէնի մօտ տեղի ունեցած կռուի ժամանակ գերի էր առնված բօէրներից այն պատճառով, որ մօտը ատրճանակ էր ունեցել։ Հաստատվելով, որ Բէրչէլը սպայ չէ, այլ բժիշկ՝ բօէրներն արձակել են նրան։

Այդ բժշկի ասելով՝ բրիտանացի գերի առնված վիրաւորեալները տեղաւորված են հիւանդանոցներում և գերազանց հոգացողութիւն են վայելում բօէրների կողմից, որոնք անգլիացիների հետ վարվում են վերին աստիճանի քաղաքավարութեամբ։ Եակօբստադի քաղաքագլուխ Վան-Գեերդենը ուղարկեց լորդ Մէտուէնին մի նամակ, որով նա յայտ է յայտնում, թէ մայոր Բէրչէլի դժբախտ կալանաւորումը անգլիացիներին դժուարութիւններ պատճառած չի լինի՝ պատերազմից յետոյ վիրաւորեալների մասին հոգալիս»։

Բայց բօէրների մեծահոգութեան աւելի լաւ ապացոյց կարող են համարվել հետևեալ հետաքրքրական մանրամասնութիւնները։ Ուինտոն Չեօրչիլլի փախուստի մասին։ Նոյեմբերի 28-ին (դեկտեմբերի 10-ին) Չեօրչիլը ուղարկում է մի նամակ գեներալ Ժուբէրին, որի մէջ յայտնում է, թէ լինելով լրագրի թղթակից՝ նա չէ մասնակցել պատերազմին և այս պատճառով խնդրում է ազատ թողնել իրան։ Գեներալ Ժուբէրը պատասխանում է Չեօրչիլլի նամակին, թէ նա գերի է առնված ոչ միայն այն պատճառով, որ մասնակցել է պատերազմին, այլ նաև, ինչպէս պատմում են Նատալի լրագիրները, նրա քաջութեան շնորհիւ միայն անգլիացիներին աջողվել է ազատել իրանց զրահապատ գնացքի մնացորդները։ Բօէրների զօրքերի գլխաւոր հրամանատարն աւելացնում է, թէ նա անձամբ չէ ճանաչում պ. Չեօրչիլլին, բայց հաւատ է ընծայում նրա ազնիւ խօսքին, թէ նա չէ մասնակցել պատերազմին, ուստի և հրաման է տալիս արձակել նրան։ Բայց այդ պատասխանը ուշ ստացվեց։ Երկիւղ ունենալով, թէ նա բացասական կը լինի՝ Չեօրչիլը նոյեմբերի 30-ին փախաւ, թողնելով մի նամակ, որով նա շնորհակալութիւն է յայտնում Տրանսվաալեան կառավարութեանը այն խնամքի համար, որ նա տեսել է բօէրներից իր գերութեան օրերում։ Կարծում էին, թէ Չեօրչիլլ ուղևորվել է դէպի հիւսիս, Ռօդեզիա, բայց երևում է, որ նա ընտրել է Լօրէնցօ-Մարկեզէի ճանապարհը, ուր և աջողութեամբ հասել է։ Այս լուրը Լոնդօնի կլուբներում ընդունվել է մեծ ոգևորութեամբ։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍԸՐՈՒԹԻՒՆԸ

—

Քանի մի օր առաջ հեռագիրը հաղորդեց, որ կոմս Կլարիի մինիստրութիւնն ստիպված էր հրաժարական տալ, կարճ ժամանակ—քանի մի ամիս միայն,—վարչութեան ղեկն իր ձեռքում պահելուց յետոյ: Կոմս Կլարիի և նրա նախորդ կոմս Բադենիի մինիստրութիւններին ևս նոյն բախտը վիճակվեց. երկուսն ևս ընկան պարլամենտական անողոք օբստրուկցիայի պատճառով, որ անզօր էր դարձնում որևէ օրէնսդրական գործառնութիւն բէյխսրատում, այս զանազանութեամբ միայն, որ կոմս Բադենիի մինիստրութեան և նրա կողմնակից պարլամենտական մեծամասնութեան դէմ զինված էր գերմանական չօվինիստ փոքրամասնութիւնը յայտնի անկարգութիւնների ղեկավար Վօլֆի առաջնորդութեամբ, իսկ կոմս Կլարիի մինիստրութեան դէմ, որ վարչական կարգով փոփոխութիւններ մտցրեց չեխական և գերմանական լեզուներին վերաբերեալ կարգադրութեան մէջ ի վնաս չեխերէնի՝ զինվեցին ոչ միայն չեխերը, այլ նաև Աւստրիայի միւս սլաւոնական ազգութիւնների ներկայացուցիչները, որոնց ժամանակաւորապէս միացան և կաթոլիկ ու պահպանողական կուսակցութիւնները:

Ուղիղ է, թէ գերմանական չօվինիստներն և թէ չեխերը դիմեցին միևնոյն միջոցին իրանց նպատակներին հասնելու համար, բայց երկու կուսակցութեան օբստրուկցիայի եղանակը բոլորովին տարբեր էր: Մինչ գերմանական ազգային կուսակցութիւնը օբստրուկցիայի միջոց էր դարձրել ոչ միայն բէյխսրատի գործավարութեան կանոններով թոյլատրված հինգ-վեց և աւելի ժամ տևող և միմեանց յաջորդող անվերջ ճառերը, այլ յաճախ դիմում էր նաև անպատկառ սկանդալների, փողոցային սրիկաներին միայն վայել ձեռի ու ջարդի, առանց խնայելու նոյն-իսկ ծերունի կայսրի անունը՝—չեխ կուսակցութիւնը, դրա հակառակ, երբէք թոյլ չը տուեց իրան դուրս գալ օրինաւորութեան սահմանից:

Կոմս Կլարիի մինիստրութեանը մնում էր դիմել սահմանադրութեան 14-րդ յօդուածի գործադրութեան, որ թոյլ է տալիս կայսրին ժամանակաւորապէս կառավարել երկիրն առանց բէյխսրատի մասնակցութեան արտակարգ դէպքերում: Սակայն, ի պատիւ կոմս Կլարիի, պէտք է ասել, որ նա չը կամեցաւ դիմել այդ ծայրայեղ, սահմանադրութեան ընդհանուր ոգուն հակառակ միջոցին, և նա աւելի լաւ համարեց քաշվել քաղաքական ասպարէզից, քան հետևել Վինդիշգրեցի մինիստրութեան օրինակին:

Աւստրիական թագի պատկանող երկրների ներքին դրութիւնը, մանաւանդ բուն Աւստրիայում, այնքան խառնաշփոթ է այժմ, այնպիսի տարբեր ու միմեանց հակասող ձգտումներով են ոգևորված այդ բազմացեղ և բազմալեզու պետութիւնը կազմող տարրերը, որ ոչ մի հնար չը կայ կառավարելու երկիրը, ուստի և կայսրը ստիպված էր, երկիրն անտէր չը թողնելու համար, ժամանակաւոր, «աստիճանաւորների» մինիստրութիւն նշանակել, նախկին մինիստրութիւնների կազմում երկաթուղային վարչութեան գլխաւոր կառավարիչ Վիտտէկի նախագահութեամբ:

Բնորոշ է այն փաստը, որ Վիտտէկը չէ կամեցել նոյն-իսկ ժամանակաւորապէս կրել մինիստր-նախագահի անունը, այլ յանձն է առել միշտ վարել ընթացիկ գործերը մինիստրների խորհրդում նախագահողի անունով: Ա՛յնչափ մեծ է այժմ աւստրիական պետական անձանց երկիւղը պատասխանատուութիւնից, որոնք վախենում են քանի մի ամսով պետութեան պատասխանատու ղեկավարի պաշտօնն յանձն առնելուց յետոյ՝ բոլորովին չքանալ քաղաքական ասպարէզից:

Զարմանալին այն է, որ Աւստրիայում այս ահագին իրարանցումն ու խառնաշփոթութիւնը առաջացած է մի այնպիսի պարզ, այնպիսի հասարակ հարցից՝ որպիսին է լեզուներին վերաբերեալ հարցը: Ահա թէ որքան մեծ է «բուդինայի» ազդեցութիւնը նոյն-իսկ այնպիսի բարձր կուլտուրական ցեղի վրա, որպիսին են Աւստրիայի գերմանացիք, որոնք ամենևին չեն կարող և ոչ նոյն-իսկ ցանկութիւն ունեն հաշտվելու այն փաստի հետ, թէ Աւստրիայում բացի գերմանական լեզուից, գոյութիւն ունի և չեխական լեզու, գոյութիւն ունեն և այլ սլաւոնական լեզուներ, որոնցով խօսող ժողովուրդը ոչնչով յետ չէ իր կուլտուրական առաջադիմութեամբ գերմանացիներից:

Գերմանական փոքրամասնութիւնը այժմ չէ կարող խաղալ Աւստրիայում այն գերակշիռ դերը, որ նրա արտօնութիւնն էր կազմում մի ժամանակ. նրանք ստիպված են ընդունել, թէ ամեն մի ազգի համար ծանոթ է իր լեզուն: Եւ քանի որ գերմանական տարրն Աւստրիայում չի հրաժարվի իր հնացած հեգեմոնիայից, չի կամենայ իջնել իր նախկին բարձրութիւնից և ընդունել միւս ազգութիւններին իրան հաւասար եղբայր՝ Աւստրիայում չէ կարող կանոնաւոր պետական կեանք լինել, և նրա մինիստրութիւններն անդադար և ապարդիւն կերպով կը յաջորդեն միմեանց, որպէս յաջորդեցին յընթացս երկու տարվայ Վինդիշգրեցի, Տունի, Բադենիի, Կլարիի և Վիտտէկի մինիստրութիւնները: Նոր մինիստրութիւնն արդէն այդպէս էլ անուանվում է սկզբից—«ժամանակաւոր»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Kölnische Zeitung» լրագիրը ասում է, որ Անգլիան, արգելելով 'Իէլագօայի վրայով մթերքներ անց կացնել Տրանսվաալի համար՝ աւելի գրգռում է իր դէմ ընդհանուրի անբաւականութիւնը: Տրանսվաալի կառավարութիւնը յայտնում է, որ եթէ Անգլիան չարունակէ արգելել ուռնստեղէնների ներմուծումը Տրանսվաալ՝ այն ժամանակ ինքը հարկադրված կը լինի կերակրել անգլիական զերիներին սիմինդրով:

—«Magdeb. Zeitung» լրագրին հեռագրում են Բրիւսէլից, որ նախագահ Կրիւգէր տրամադրված է խաղաղութեան մասին բանակցութիւններ սկսել, եթէ միայն անգլիական կառավարութիւնը չը շարունակէ պնդել իր պահանջների վրա, այն է՝ տալ ուիտլէնդերներին աւելի քաղաքացիական իրաւունքներ՝ քան որքան նրանք ունէին պատերազմից առաջ: Իսկ եթէ, աւելացնում է հեռագիրը, Մեծ Բրիտանիան չարունակէ պատերազմը՝ այն ժամանակ Կրիւգեր և Շոէէն նախագահները կոչում կանեն Կապլանդիայի բօէրներին, որպէսզի նրանք միանան իրանց եղբայրներին և ապատութիւն կը հրատարակեն հանրապետութիւնների բոլոր հարևան երկիրներում»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

20 դեկտեմբերի

ՎԻԿՏՕՐԻԱ-ԲՕԱԴՈՍ: Դեկտեմբերի 17-ին: «Ընդ.տէրի գործ.»: Անցեալ գիշեր տեղի ունեցաւ փոխադարձ հրացանաձգութիւն անգլիական բանակի առաջապահ զօրքի և բօէրների գօրաբաժնի մէջ: Նորերումս փոքր եղաւ ոչնչացնել երկաթուղու թունելը. յանցաւորներից մէկը ձերբակալվեց և հրացանի բռնվեց. միւսը փախաւ: Զինուորական իշխանութիւնները բոլորովին նախապատրաստված են այդպիսի միջադէպերի համար:

ԼՕՆԴՕՆ: Դեկտեմբերի 19-ին: «Ընդ.տէրի գործ.»: «Times» լրագրին հեռագրում են Ֆրէրից, դեկտեմբերի 17-ից, որ Ուայտի դուրս գալու նոր փորձի մասին լուրը չէ հաստատվում, թէպէտ այդ լուրը տարածել էին ուրիշ տեղացիներ: Լօրէնցօ-Մարկէզէից, դեկտեմբերի 17-ից «Times» լրագրի ստացած հեռագրի համաձայն՝ երկաթուղիների գլխաւոր դիրեկտորը հերքում է այն լուրը, որպէս թէ ինքը մտադիր է եկող տարվայ սկզբից դադարեցնել երկաթուղիական հաղորդակցութիւնը Տրանսվաալի հետ: Ֆրէրի մօտ գտնվող բանակից դեկտեմբերի 19-ից ստացած հեռագրին նայելով՝ մի մութ, փոթորիկ գիշեր այնտեղ երկու յարձակում է գործված, որոնք, այնուամենայնիւ, անաջող են եղել: Անգլիական զօրքերը թրջվեցին մինչև ոսկորները և պարտութիւն կրեցին: Գաշտօնապէս հաղորդվում է. Մէտուէնի բանակի դրութիւնը անփոփոխ է: Ֆրէնչ հաղորդում է, որ բօէրները մաքրեցին իրանց ամրացրած դիրքերը Բէնսբուրգի մօտ, որպէսզի յետ քաշվեն դէպի Կոլէնսբէրգ, որովհետև անգլիական հեծելազօրքը սպառնում է նրանց հաղորդակցութեան գծին: 21-դ ուլանեան գնդի բօտմիստր Մօնմօրանսի ընդհարվեց թշնամու մի զօրաբաժնի, որ գերազանցում էր իր թիւով և ունէր թնդանօթներ, և օրվայ ընթացքում ստիպված եղաւ յետ նահանջել դէպի Դօրդրէխտ, որը նա կատարեց լաւ կարգապահութեամբ: Դօրդրէխտում անգլիացիք պահպանողական դիրք են բռնել:

ԲԵՐԼԻՆ, յունվարի 1-ին (Ն. տ.) «Վօլֆի գործ.»: Նոր դարը ողջունելու առիթով, կայսրը դիմեց Բերլինի պահանոցի զօրքի սպաներին հետևեալ ճառով. «Նոր դարի առաջին օրը նայում է մեր զօրքին, այսինքն մեր զինուորված ժողովուրդին, որոնք ժողովված են զրօշակների հովանաւորութեան տակ: Զինուորական համհարզը կեցած է ծնկաչոք Արարչի առաջ, և, իսկապէս, եթէ որևէ մէկը առանձին պատճառ ունի չոգել այսօր Աստծու առաջ՝ դա անշուշտ մեր զօրքն է: Բաւական է միայն մի հայեացք ձգել մեր զրօշակների վրա, որ բացատրվի այդ, որովհետև այդ զրօշակները ծառայում են իբրև պատկերացումն մեր պատմութեան: Ի՞նչ դրութեան մէջ էր գտնվում մեր զօրքը անցեալ դարի սկզբում: Ֆրիդրիխ Մեծի փառաւոր բանակը հանգչում էր դափնիների վրա. այդ զօրքը քարացել էր. առաջնորդում էին նրան զառամեալ, պատերազմական կեանքին անընդունակ գեներալներ. նրա օֆիցէրները, մոռանալով պտղաբեր գործունէութիւնը՝ ընկղմված էին շռայլութեան, ախորժելի կեանքի և անմիտ ինքնախաբէութեան մէջ. մի խօսքով, զօրքը ոչ միայն չէր գտնվում այլ ևս իր կոչման բարձրութեան վրա, բայց մինչև անգամ բոլորովին մոռացել էր նրա մասին: Խստագոյն էր նրա գլխին ընկած երկնային պատիժը, որը հետքեր է թողել և մեր ժողովրդի վրա. նա փոշի դարձաւ, Ֆրիդրիխի փառքը նսեմացաւ, նրա դրօշակները ոչնչացան: Շատ տարիների ընթացքում մեր ժողովրդի մէջ այն միտքն էր ծնվում, թէ որպէս զինուոր հայրենիքին ծառայելը, նրա համար իր գոյքը և արիւնը զոհելը ամենամեծ պատիւ է: Իմ նախահաւը ընդհանուր զինուորագրութեանը ձև և կեանք տուեց, և նորածին զօրքն ու նրա նոր դրօշակները դափնիներով պսակվեցին: Ընդհանուր զինուորագրութիւնը իրական նշանակութիւն ստացաւ միայն շնորհիւ մեր հանգուցեալ մեծ կայսրի. առանձնասնեակի լռութեան մէջ նա մշակեց զօրքի վերակազմութեան ծրագիրը, և չը նայելով նրան ցոյց տրված անմիտ դիմադրութեանը՝ յաղթական արշաւանքները սակայն պսակեցին նրա գործը. միևնոյն ժամանակ,—ոչ ոք այդ չէր սպասում,—նրա զօրքի շարքերը ընդունեցին նրա ոգին, և նրա հաւատը տարաւ նրան դէպի մինչև այդ ժամանակ չը լված յաղթութիւնները: Շնորհիւ այն բանի, ինչ որ նա անձամբ ստեղծել է՝ նա նորից ի մի խմբեց գերմանական ցեղերը և վերադարձրեց մեզ գերմանական միութիւնը, որին մենք այնքան երկար ձգտում էինք: Նրան ենք պարտական մենք այն բանով, որ շնորհիւ մեր զօրքի, Գերմանիան ազգերի շրջանում նորից գրաւում է յարգանք ներշնչող տեղ: Այժմ, յարգելի պարոններ, ձեզ մնում է նոր դարում ևս ցոյց տալ այն յատկութիւնները, որոնց շնորհիւ մեր նախորդները փառաւորեցին մեր զօրքը: Ինչպէս վարվեց իմ պապը իր ցամաքային զօրքի հետ՝ ես ևս հէնց այնպէս անդադար կը ձգտեմ վերակազմելու նաւատորմը, որպէսզի նա հաւասար իրաւունքով կարողանայ կանգնել իմ ցամաքային ոյժերի շարքում և գերմանական կայսրութեան համար, նրա սահմաններից դուրս, այն տեղը գրաւել՝ որը նա այժմ դեռ չունի: Ունենալով այդ միացեալ ոյժերը և հաստատ յոյս դնելով Աստուծու բազկի վրա՝ ես յոյս ունեմ իրագործել Ֆրիդրիխ Վիլհէլմի ասած խօսքերը. ով կամենում է աշխարհումս մի բանի հասնել՝ նա դրան պէտք է ձգտի ոչ թէ գրչով, այլ սրի զօրութեամբ»:

21 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ցայտնի հեղինակ Դ. Վ. Դրիգօրովիչ ծանր կերպով հիւանդացաւ: Հիւանդութիւնը երկիւղ է ազդում:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործ.»: Պաշտօնական ընդունելութիւնը Ելիսեան պալատում տեղի ունեցաւ սովորական հանդէսով: Պապի նուիրակը, ներկայացնելով դիպլոմատիական մարմինը, խօսեց 1900 թուի ցուցահանդէսի մասին, «որ, ասաց, ազգերին կը յիշեցնէ, թէ նրանք եղբայրներ են»: Ցետոյ յիշեցնելով, թէ ցուցահանդէսը հանդիպում է «սրբազան տարիին», նուիրակը ցանկութիւն յայտնեց, որ Ֆրանսիան այստեղ էլ շարունակէ քրիստոնէական քաղաքակրթութեան գլուխ տեղը գրաւել: «Ֆրանսիայի բարօրութիւնը, ասաց նա, հաւասարապէս անհրաժեշտ է թէ հաստատութեան և թէ եկեղեցու փառքի համար»: Լուբէ, շնորհակալութիւն յայտնելով ասաց, թէ 1900 թուի ցուցահանդէսից, գիտութիւնների, արուեստների և արդիւնագործութեան զարգացման հիանալի տեսարանից բոլորը կը նկատեն, որ ապագայում մեծութիւնը և հզօրութիւնը ձեռք կը բերվեն միայն աշխատաւորների խաղաղ մրցակցութեամբ: «Այն ընդունելութիւնը, շարունակեց նախագահը, որ ցոյց տրվեց Ֆրանսիայի հրաւէրին, ապացուցանում է, որ մեր նախաձեռնութիւնը համապատասխան է բոլորի ձգտումներին և յոյսերին»: Ի վերջոյ Լուբէ ասաց. «Այն հիւրասիրութեան, որ մեր երկիրը ցոյց է տալիս ազգերին, ամենալաւ վարձատրութիւնը այն գիտակցութիւնն է, որ նա զգալի չափով նպաստեց հաստատաշխատութեան, որին ձգտում են աշխարհի բոլոր ժողովուրդները»:

ԱԹԷՆՔ: Արքայորդի Դէօրգին այսօր այստեղ ժամանեց Կրետէից:

ՎԻԷՆՆԱ: Երէկ այստեղ հասաւ չինական դեսպան Եան-Ի-Ւ-Է:

ԼՕՆԴՕՆ: Լրագիրներում հրատարակված է հետևեալ հեռագիրը Բէնդբուրգից. «Գեներալ Ֆրէնչ բօէրներին կատարեալ կոտորած տուեց, գրաւեց Կոլէսբէրգը և շաբաթ ու կիրակի օրերը այնպէս նեղ ձգեց թշնամուն, որ միջոց չը տուեց այլ ևս դիմադրել: Առաւօտեան դէմ անգլիական զօրքերը թշնամուց գտնվում էին այնքան հեռաւորութեան վրա, որ թոյլ էր տալիս յարձակում գործել: Երէկ երեկոյ բոլոր հեծելազօրքը, թնդանօթները և հետևակ զօրքը շարժվեցին տեղից: Նպատակն էր՝ բօէրների աջ թևի յետևն անցնել: Փորձը կատարելապէս աջողվեց. հետևակ զօրքը և դաշտային հրետանին բօէրների վրա յարձակվեցին ճակատից. մինչդեռ հեծելազօրքը և թեթև թնդանօթները պատում էին աջ թևը: Բօէրները երբ նկատեցին, որ իրանց նահանջի ճանապարհը վտանգված է՝ սարսափահար եղան և անկարգ փախուստ տուին, թողնելով Կոլէսբէրգը անգլիացիների ձեռքին:

ՊԱՐԻԶ: Բարձրագոյն դատարան: Դէրէֆուսի ապացուցանում է հակասեմական լիգան հիմնելու անհրաժեշտութիւնը և քննադատում է պարլամենտական կարգերը: Մէնաբ, Դէրէֆուսի փաստաբանը, պաշտպանողական ճառ է արտասանում: Ցաջորդ նիստը տեղի կունենայ վաղը:

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Սառնամանիք է: Քարածուխը հետզհետէ թանգանում է: «Приазовскій Край» լրագրին հաղորդում են, թէ Ցարիցինի երկաթուղային գծի վրա վերջին օրերս կատաղի բուք է, որ շատ խանգարում է երթևեկութիւնը:

ՄՕՍԿՎԱ: Այսօր Մոսկվայի նահանգական ազնուականների ժողովի արտակարգ նիստում յայտարարվեց, որ Դիմիտրի Ստեպանովիչ Նէչաև նուիրում է 300,000 բուբլի Մոսկվայի նահանգի անքուժելի հիւանդ ազնուականներին խնամելու համար և յանձն է առնում այդ նպատակով ազքատանոցի կառուցումը: Ժողովը, ուշադրութեան առնելով Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէօդորօվնայի մշտական հոգսերը ազքատ երեխաների մասին, որոնց թուում և ազնուականների երեխաների մասին, որոշեց՝ ի յիշատակ Նոցա Մեծութիւնների հիմնած ապաստարանում 45 հազար բուբլու ստիպենդիա նշանակել:

ՖՐԷՐ: Բօէրները դեռ չարունակում են գրաւել Կլանգվանդբէրգ, Ցուգէլայից դէպի հարաւ, և երէկ ռումբեր էին արձակում խուզարկու զօրաբաժնի վրա:

ՄՕԴԴԷՐ-ՐԻՎԷՐ: Բօէրները սկսեցին անկարգ ռմբակոծութիւն, որը վնաս չէ պատճառում:

ՍՏԷՐԿՍՏՐՕՄ: Անգլիական գիշերապահ զօրքը ութ մղոն հեռաւորութեամբ Դօրդրէխտից դէպի հիւսիս հանդիպեց բօէրներին: Վեց ժամ տիրող կռուից յետոյ, բօէրներին օգնութեան հասաւ թնդանօթաձիգ զօրքը: Անգլիացիները յետ քաշվեցին դէպի Դօրդրէխտ, և թշնամին հետաձուտ չեղաւ նրանց:

ԼՕՆԴՕՆ: «Times» լրագիրը առաջնորդող յօդուածում նկատում է. «Արդեօք պատերազմը որևէ բան ապացուցեց թէ ոչ, բայց նա, գոնէ, հասցրեց ազգին այն բանում, որ մեր երկրի զինուորական հիմնարկութիւնների մէջ անհրաժեշտ է ընդարձակ վերանորոգութիւններ մտցնել:

ԿԱՊՇՏԱԴՏ: Դօրդրէխտում գտնվող զօրքերը բօէրների հետ յաղթական ընդհարում ունէին: Ցետ մղելով բօէրներին, նրանք ազատեցին անգլիական թոյլ զօրաբաժինը, որը յետ էր մնացել նախընթաց օրվայ պատերազմական գործողութիւնների ժամանակ:

ԲԷԼԳՐԱԴ: Ալէքսանդր թագաւորը ժամանեց այստեղ և ոգևորութեամբ ընդունվեց ազգաբնակութեան կողմից: Կառավարական շրջաններում մեծ գոհունակութիւն են արտայայտում այն սրաբորբ ընդունելութեան համար, որ Վիէննայի արքունիքը ցոյց տուեց թագաւորին, հանդէս հանելով և այն տնտեսական չահերը, որոնցով Սերբիան կապվում է Աւստրօ-Ունգարիայի հետ:

ԲԵՐԼԻՆ: «Reichsanzeiger»-ը հաղորդում է թէ Վիէննայի գերմանական դեսպան Էլէնբուրգին շնորհված է իշխանական տիտղոս, Սիլիզիայի ընդհանուր նախագահ իշխան Հացֆէլդին շնորհված է դքսի տիտղոս:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴԻՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷԴԷՎԱՆՈՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից։

Առաւօտեան՝

Վ. Ի. ՃԻՃԻՆԱՁԷ—*ատամների հիւան.* 8—10 *ժ.*
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—*ներքին հիւանդ.* 9—10 *ժ.*
Դ. Կ. ԷՐԻՍԹՕՎ—*վիրաբուժութեան.* 10—12 *ժ.*
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—*ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր.* $10^1/_2$—12 *ժ.*
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—*աչքի հ.* 12—1 *ժ.*
Ն. Զ. ՈՒՄԻԿՕՎ—*երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր.* 12—1 *ժ.*
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—*վիրաբուժական հ.* $12^1/_2$—$1^1/_2$ *ժ.*
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—*վեներական, մորթի և միզասեռ. հ.* $1^1/_2$—2 *ժ.*
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—*նեարդային և ելեկտրոտէրապիա,* 1—2 *ժ.*

Երեկոներ՝

Դ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—*ներքին և երեխաների հ.* (*ծաղկահատութիւն*) 5—6 *ժ.*
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—*կանանց և մանկաբարձական,* 5—6 *ժ.*
Ս. Ի. ՎԱՅՍԱՁԷ—*ներքին հ. և մասսաժ,* 6—7 *ժ.*

Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար։

Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով։

Նիկոլաեվսկայա փողոց, Վորոնցովի արձանի հանդէպ, տ. Սագինովի, № 11.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
18—20 Միխայիլ Գէդէվանով

ԲԱՆԿԱՑԻՆ ԹԱՏՐՕՆ

Հինգշաբթի օր, դեկտեմբերի 23-ին

ՀԱՄԵՐԳ

Խ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

Մասնակցութեամբ օր. Ալիխանեանի, պ. պ. Վարդիկեանի, Ղարագեօզեանի Մ. Ռոստոմեանի և 70 հոգուց բաղկացած խմբի։

3—4

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ՍՐԱՐՈՒՆԻ

Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բկի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար իր նոր բնակարանում։ Սօլօլակ, Սերգիեվսկի փող., տ. Ծովիանովի։

8—10

ԲԺԻՇԿ Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Ընդունելութիւն բերանի խոռոչի և ատամների հիւանդութիւնների։ Ամենայն օր 10—2 *ժամ առաւօտեան և* 4—$7^1/_2$ *ժամ երեկոյեան. իսկ կիրակի օրերը՝* 10—2 *ժամ։ Վեյեամինեան փողոց, տուն № 2, երկրորդ մուտքը Երևանեան հրապարակից։*

(Ա. Հ. շ.) 6—10

Լոյս տեսան

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ

1900 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Յանկացողները թող շտապեն՝ որպէս զի ժամանակին կարողանան հասցնել։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Չմշկեան։ (Ե. Շ.) 17—20

II-й годъ изданія — II-й годъ изданія

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„НЕФТЯНОЕ ДѢЛО“

на 1900 годъ,

органъ Совѣта съѣзда нефтепромышленниковъ въ г. Баку.

Выходитъ 2 раза въ мѣсяцъ по слѣдующей программѣ:

1. Узаконенія и распоряженія Правительства, касающіяся нефтяной промышленности. 2. Самостоятельныя статьи, посвященныя нефтяной промышленности и другимъ связаннымъ съ нею вопросамъ, каковы: судоходство, пути сообщенія, тарифы, кредитъ и т. п. 3. Хроника нефтяного дѣла: буреніе, добыча нефти, заводская ея переработка, вывозъ и торговля нефтяными продуктами 4. Новости техники нефтяного дѣла. 5. Статистика нефтяного дѣла. 6. Обзоръ печати: свѣдѣнія и мнѣнія другихъ изданій по вопросамъ нефтяной промышленности и ихъ критическая оцѣнка. 7. Корреспонденціи и телеграммы изъ нефтяныхъ районовъ и центровъ нефтяной торговли. 8. Нефтяная биржа: цѣна на нефтяные продукты, состояніе рынковъ, акцій нефтепромышленныхъ обществъ и общія биржевыя свѣдѣнія. 9. Положеніе, нужды и статистика рабочаго населенія и служащихъ бакинскаго промысловаго района. 10. Несчастные случаи и пожары на нефтяныхъ промыслахъ. заводахъ, складахъ, станціяхъ, пристаняхъ, судахъ и поѣздахъ. 11. Отчеты нефтепромышленныхъ фирмъ. 12. Библіографія: рецензіи о книгахъ и статьяхъ по нефтяной промышленности и вопросамъ. имѣющимъ связь съ нею. 13. Смѣсь: мелкія новости изъ нефтяного міра. 14. Отчеты о съѣздахъ нефтепромышленниковъ. 15. Представительская дѣятельность Совѣта съѣзда нефтепромышленниковъ: ходатайства, отзывы, мнѣнія и переписка Совѣта по вопросамъ и нуждамъ нефтяной промышленности съ правительственными и общественными учрежденіями. 16. Хозяйственная дѣятельность Совѣта по благоустройству бакинскаго промысловаго и заводского районовъ: врачебное дѣло, народное образованіе, пути сообщенія, осушеніе промысловъ, пожарное дѣло, общественныя сооруженія, приходъ и расходъ суммъ съѣзда и пр 17. Объявленія о предметахъ, имѣющихъ связь съ нефтяной промышленностью.

Подписная цѣна съ доставкой: на годъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р., на 3 мѣсяца 4 руб.

Подписка принимается въ г. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтепромышленниковъ

Объявленія принимаются тамъ-же.

1—3 Редакторъ *П. О Гукасовъ.*

38—52 М. 35,967 (:)

Գրասենեակ „Ա. Փրիդօնեան եւ Ընկ.“

Ապահովացնում է ներքին փոխադրութեան վիճակախաղի տոմսերը ցնոր փոփոխութիւնս։

1 *ր.* 85 *կոպ. ամեն մէկ տոմսի համար* I *փոխադրութեան, յունվարի* 2-*ի տիրաժից* 1900 *թ.*
1 *ր.* 35 » » » » » II » *մարտի* 1-*ից* » 1900 *թ.*
1 *ր.* 10 » » » » » III » *մայիսի* 1-*ից* » 1900 *թ.*

Բացի 15 *կոպ. մարկից ամեն մէկ անդորրագրի համար։ Գրասենեակը հեռագրով և վերադիր վճարով չէ ապահովացնում։* (ռ. ե.) 2—2

ՀԱՅԹԱՅԹՈՂ ԲՈՐՁՐԵՊՈՅՆ ԳԱԼԱՏԻ

Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱ

ԾԱՂԿԱՋՈՒՐ

ՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՏԱԼԵՏ ՋՐԵՐԸ.

Սրուակը 60 կ. և 1 *բուբլի։*

ԾԱՂԿԱՍԱՊՈՆ (*բարձր տեսակից*)

8 *տեսակ հոտով, կտորը* 20 *կոպ.*

ԾԱՂԿԱՅԻՆ ԳԼԻՑԵՐԱՅԻՆ ՍԱՊՈՆ

8 *տեսակ հոտով, կտորը* 20 *կոպ.*

ԹԱՒՐԱՅԻՆ ՊՈՒԴՐԱ

Արկղը 25 *կոպ.* և 50 *կոպ.*

Москва, 1) Пассажъ Солодовникова. 2) Тверская, д. Спиридонова. **С.-Петербургъ**, Невскій 18.

Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում։

М. 59808

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

Ежедневная газета,

Съ будущаго года будетъ выходить въ увеличенномъ форматѣ по слѣдующей, утвержденной правительствомъ программѣ: I. Приказы по военному и гражданскому управленіямъ Кавказа и Закавказья. II. Статьи по внутреннимъ вопросамъ. III. Обозрѣніе иностранной политической жизни. IV. Научно-литературный отдѣлъ. V. Общая хроника: внутренняя и иностранная. VI. Библіографія. VII. Мѣстный отдѣлъ и корреспонденціи. VIII. Обширный справочный отдѣлъ. Иллюстрированныя прибавленія къ газетѣ, посвященныя кавказовѣдѣнію и матеріаламъ исторіи Кавказа въ связи съ постепеннымъ развитіемъ въ краѣ гражданскихъ учрежденій, будутъ выходить попрежнему, не менѣе двѣнадцати номеровъ въ годъ.

По понедѣльникамъ и послѣпраздничнымъ днямъ подписчикамъ будутъ разсылаться телеграммы.

Подписная цѣна остается безъ измѣненія, а именно: *иногороднымъ*: на годъ—7 руб., на 6 мѣсяцевъ—3 руб. 50 к., на 3 мѣсяца—2 руб., на 1 мѣсяцъ—1 руб.

Подписка принимается исключительно *въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій. № 3.*

2—3

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшнія занятія благодарности.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), **2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.**

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца. 2—100

Преподов. ведется по собств. сочиненіямъ.

Годъ занятій десятый.

Եղբարք Ե. եւ Մ. Միրզաբէկեանցների

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԳԻՈՒՄ

Ի նկատ առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է՝ մենք, որպէսզի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վրճեցինք Թիֆլիսում (Հալաբարի կամուրջի մօտ, տուն Խաբլօվի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները։ Հրաւիրում ենք պ. պ. ծխողներին անձամբ հաւաստիանալ մեր ծխախոտի բարձր յատկութեան։

Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են—Тифлисъ, Табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.

Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և շուտ։ 2—10

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՋՐԱՂԱՑԱՔԱՐԵՐ

մատչելի գներով և զանազան մեծութեան։

Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.

Որովհետև վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ շատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ։

19—40 *Քարահանքի կապալառու՝* Աբրահամ Հասան-Ջալալեանց

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) *Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։*
Բ) *Առևտրական թուաբանութիւն։*
Գ) *Առևտրական նամակագրութիւն։*
Դ) *Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։*

Պարապմունքները սկսվելու են 1900 *թվի յունվարի* 15-*ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։*

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 *ժամից մինչև* 6 *ժամ երեկոյեան,* ՍՕԼՕԼԱԿ, *Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի,* № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, *հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։* ԳԻՆՆ Է 3 *ր.* 50 *կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պաստի ծախս վճարելու։* 2—20

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Декабря 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.